ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍՆ

ԲԱԴՈՒ ՔԱՂԱՔ

Շատ անգամ բարեգործութիւններն հռչակվում և հրատարակվում են ուրիշներին խրախոյս, խրատ և օրինակ լինելոյ համար, որով և մասամբ բարեգործը կ'վարձատրուի բարոյապէս՝ պատճառ լինելով շատերին բարեգործութեան։

Այսպէս և ես ցանկալով շատերին խրախոյս կարդալ բարեգործների օրինակին հետեւելոյ՝ համառօտութեամբ նկարագրեցի բագուեցի ազգայնոց բարեպաշտ գործողութիւնքն յօգուտ ազգային հաստատութեանց, զոր և պատրաստեցի հրատարակել ի լուր ամենեցուն ի խրախուսութիւն բարեգործաց և ի հրաւիրումն այլոց դէպ ի բարեգործութիւն։

Բագուայ բարեպաշտ և պատուական ազգայինք, որ ամեն մի եկեղեցական, վանքական, դպրոցական, հասարակական և սոցա նման գործերի մէջ առաջին տեղն են բռնում, որոց ապացոյց նոցա մեծամեծ նուէրներն յօգուտ զանազան հաստատութեանց՝ մանաւանդ ի նպաստ Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի, նոյնպէս Մարդասիրական Ընկերութեան նորակառոյց եկեղեցական դպրոցն, որոյ հիմքն օրհնեց անցեալ տարի ի 23 հոկտեմբերի (1888) յաւուր տօնի Գիւտ Խաչին՝ Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Ս. Մակար, Աղթատանոցն, որոյ շէնքն օրհնեց Նորին Վեհափառութիւնն ի 24 նոյն ամսոյ, ինչ-